

Հղիության դեղորայքային ընդհատման ընտրության ընդլայնումը Հայաստանում

Ներածություն

Հարավային Կովկասում գտնվող Հայաստանի Հանրապետությունը Խորհրդային Միությունից անկախություն ձեռք բերեց 1991 թվականին: Հայաստանում բնակվող 3 միլիոն բնակչությունից գրեթե

երկու երրորդը ապրում են քաղաքներում:

Հղիության արհեստական ընդհատումը Հայաստանում օրինական է սկսած 1995թ.-ից և իրականացվում է պահանջի դեպքում հղիության առաջին 12 շաբաթների շրջանում, իսկ հղիության 12 շաբաթներից բարձր մինչ 28 շաբաթ ժամկետներում՝ տարաբնույթ լուրջ բժշկական և սոցիալական պատճառներով: Մասսար կապված ընտանիքի պլանավորման ծառայությունների ոչ բավարար որակի և ժամանակակից հակաբեղմնավորիչների օգտագործման ցածր մակարդակի հետ, հղիության արհեստական ընդհատումը ծնելիության վերահսկման հիմնական մերուն է: Հղիության արհեստական ընդհատման աստիճանը մնում է բարձր. մեկ կնոջը բաժին է ընկնում 2.6 հղիության ընդհատում: Հղիության արհեստական ընդհատումը մեծամասամբ կատարվում է ամուսնացած կանաց շրջանում. իրենց ընտանիքի ցանկալի չափը ստանալուն պես նրանք վերահսկում են իրենց պտղաբերությունը: Չամուսնացած կանաց շրջանում հղիության ընդհատումը ավելի պակաս է կիրառվում, եւ նրա նպատակն է հետաձգել առաջին ծննդաբերությունը:

Ներկայումս միայն հղիության վիրահատական ընդհատումն է հասանելի Հայաստանում: Քանի որ հղիության արհեստական ընդհատումը պետք է իրականացվի գիմեկոլոգների կողմից և ծննդատուրում, գիմեկոլոգիական հիվանդանոցներում կամ մասնագիտացված առողջապահական կենտրոններում, գյուղական վայրերում ապրող բազմաթիվ կանաց համար հղիության արհեստական ընդհատման ապահով ծառայությունները հասանելի չեն:

Հղիության միֆեարիստոն դեղորայքային ընդհատման ներկայացումը, որը հեշտ է կիրառման տեսակետից և կարող է առաջարկվել ոչ մասնագետ բժիշկների և միջին մակարդակի բուժաշխատողների կողմից, հնարավորություն է տալիս լրացնել այս կարիքը: Հղիության դեղորայքային ընդհատումը կրաքելավի նաև վերարտադրողական առողջության խնամքի որակը, վիրահատությունից խուսափող կանաց ընձեռելով կարևոր այլնտրանք:

Գիտելիք, Վերաբերմունք և Կիրառում

“Gynuity Health Projects” կազմակերպությունը, համագործակցելով Երևանում գտնվող Կանաց հրավունքների կենտրոնի հետ, ներկայացնում է հղիության միֆեարիստոն դեղորայքային ընդհատման տարրերակը Հայաստանի հիվանդանոցներում: Որպես առաջին քայլ անցկացվել է հղիության արհեստական ընդհատման հետ կապված բժշկական ծառայություններ մատուցողների գիտելիքների, վերաբերմունքի և կիրառման, ինչպես նաև կանաց հղիության արհեստական ընդհատման նոր մեթոդի վերաբերյալ գիտելիքների և վերաբերմունքի մակարդակի գնահատումը: 2007 թվականի հունիս-հուլիս ամիսներին չորս հարյուր կանայք և 99 բուժաշխատողներ մասնակցել են հարցմանը Հայաստանի 3 քաղաքային շրջաններում՝ Երևանում, Էջմիածնում և Վանաձորում:



Կանաց շրջանում անցկացրած հարցման հիմնական արդյունքները


- » Կանաց ճնշող մեծամասնությունը լավ չեն տեղեկացված Հայաստանում հղիության արհեստական ընդհատման իրավական կարգավիճակի վերաբերյալ: Հարցմանը մասնակցած յոթ կանացից մեկը կարծում է, որ հղիության արհեստական ընդհատումը անօրինական է ցանկացած հանգամանքներում: Ավելի ցածր կրթությամբ կանայք հակված են կարծել, որ հղիության արհեստական ընդհատումը բացարձակ անօրինական է: Այս կանայք, որոնք կարծում են, որ հղիության արհեստական ընդհատումը օրինական է որոշ հանգամանքներում, մեծամասամբ տեղյակ չեն հղիության ժամկետների սահմանափակումների կամ այն պայմանների մասին, որոնց առկայության դեպքում հնարավոր է իրականացնել հղիության արհեստական ընդհատումը:
- » Ճնշող մեծամասնությունը համոզված է, որ կանայք հղիության արհեստական ընդհատման ծառայությանը հասնելու համար համուշական են առնվազն մեկ խոչընդոտի: Ամենահաճախ համուշական խոչընդոտներից են՝ անձնական/կրոնական համոզմունքները (57%); զուգընկերոց առարկությունը (54%); ծառայությունների բարձր արժեքը (39%):

- Թեեւ հղության դեղորայքային ընդհատման ծառայությունները դեռևս առկա չեն երկրում, հարցմանը մասնակցած կանանց 59%-ը լսել էին մեթոդի նասին, թեև շատերը ունեին մակերեսային կամ ոչ ճիշտ գիտելիքներ: Հարցմանը մասնակցած կանանց մեծամասնությունը հղության դեղորայքային ընդհատման նասին լսել էին իրենց ընկերներից (34%), բժշկից (21%) կամ բարեկամից (21%): Երեք քարորդից ավելին կարծում են, որ հղության դեղորայքային ընդհատման համար նախատեսված դեղամիջոցները կարող են ծեռք բերվել դեղատներից:
- Տեղեկությունները հստակեցնելու նպատակով բոլոր կանանց ծանոթացրել են հղության դեղորայքային ընդհատման ընթացակարգի համարոտ նկարագրի հետ, և միայն դրանից հետո հարց է տրվել, թե ո՞ր մեթոդը նրանք կը նորութիւն հետագայում անհրաժեշտության դեպքում: 30%-ը հետաքրքված էին փորձելու հղության դեղորայքային ընդհատումը, 25%-ը հայտնեցին, որ կը նորութեն հղության վիրահատական ընդհատումը, և 45%-ը չունեին որևէ նախընտրություն կամ չէին կողմնորոշվել որևէ տարբերակի ընտրության հարցում:

Պուժաշխատողների շրջանակում անցկացրած հարցման հիմնական արդյունքները

- Հարցմանը մասնակցած բուժաշխատողները ավելի քիչ էին հակված ոչ ապահով հղության ընդհատումը համարելու շատ լուրջ խնդիր (37% և 59% համապատասխանաբար): Կին բժիշկները տղամարդ բժիշկների համեմատ կրկնակի անգամ ոչ ապահով հղության արհեստական ընդհատումը համարում էին շատ լուրջ խնդիր (37% և 59% համապատասխանաբար):
- Հարցմանը մասնակցած բժիշկները, որոնք առավել փորձառու էին առաջին եռամսյա ժամկետներում հղության ընդհատման հեռացման և քերման (D&C) մեթոդը կիրառելու գործում, հետևում էին էլեկտրական վակուում ասպիրացիային (EVA) (տես պատկեր 1): Ցուրաքանչյուր 10 մասնավոր բուժաշխատողներից 1-ը իրենց համարում են “շատ փորձառու” միֆեպրիստոն հղության դեղորայքային ընդհատման մեթոդը կիրառելու գործում, մինչդեռ հանրային բուժաշխատողներից որեւէ մեկը դա չի նշել¹:
- Ընդհանուր առանձին, հարցվողների շրջանում երկու անգամ ավել էին հղության դեղորայքային ընդհատման միայն միզոպրոպուստոլի կիրառման մեթոդի օգտագործման, քան միֆեպրիստոն մեթոդի կիրառման օգտագործման “փորձ ունեցողները” (12% և 6% համապատասխանաբար): Այնուամենայնիվ, օգտագործվող ռեժիմները շատ են և միայն 4 բուժաշխատողներ արձանագրեցին հղության դեղորայքային միֆեպրիստոն ռեժիմը (600մգ միֆեպրիստոն + 400msc միզոպրոպուտոլ)²
- Այն հարցին, թե որոնք են այն հիմնական պատճառները, որ նրանք իրենց հիվանդներին չեն առաջարկում հղության դեղորայքային ընդհատումը, 38%-ը պատասխանեցին, որ նրանք անհանգստանում են մեթոդի արդյունավետության վերաբերյալ, նյու 32%-ը անհանգստություն հայտնեցին մեթոդի ապահովության վերաբերյալ: 31%-ը զգում էին, որ իրենց մեթոդի նասին բավականաչափ տեղյակ չեն, որպեսզի այն վստահորեն առաջարկեն իրենց հիվանդներին:
- Բուժաշխատողների մեկ երրորդից ավելին հայտնեցին, որ շատ են շահագրգրված մասնակցելու հղության դեղորայքային ընդհատման վերաբերյալ դասընթացին: Հանրային բուժիմնարկներում աշխատող բժիշկները ավելի շահագրգրված էին, քան մասնավոր բուժիմնարկներում աշխատողները, եւ երիտասարդ բժիշկների շահագրգրվածությունը ավելի մեծ էր, քան դրանց մեծահասակ գործընկերներինը:

Պատկեր 1. Բժիշկներ, որոնք հայտել էին, որ իրենք շատ փորձառու են առաջին եռամսյա ժամանակահատվածում հղության արհեստական ընդհատման նշված մեթոդների կիրառման տեսակետից (տոկոսային հարաբերակցությամբ)



¹ Հղության դեղորայքային ընդհատումը օրինական է Հայաստանում, այնուամենայնիվ անհրաժեշտ դեղորայքը բավականաչափ հասանելի չէ: Միֆեպրիստոնը գրանցվել է 2007 թվականի ապրիլին, սակայն տարածման մեխանիզմները հաստատված չեն: 2008թ. հուլիսին միզոպրոպուտոլը պաշտոնապես գրանցվել է, սակայն դեռևս չի վաճառվում դեղուածություն: Այնուամենայնիվ, միզոպրոպուտոլը ապօրինի կերպով ներկրվում է հարևան երկրներից և հասանելի է դեղատներում և շուկայի միջոցով:

² Այնուամենայնիվ այս ռեժիմը ներկայացված է որպես արդյունավետ, լայնորեն տարածված հիվանդանոցային փորձը և լայնամասշտար ուսումնակիրությունները ցույց են տվել, որ միֆեպրիստոն չափաքանակը կարող է իջեցվել մինչև 200մգ՝ առանց դրա արդյունավետության բուլացման:

Research Summary

Եղակացություն

Այս հարցումները ընդգծում են երկու հիմնական գործողությունների անհրաժեշտությունը. կանանց համար ուսումնական նյութերի մշակումը և բուժաշխատողների համար դեղորայքային ընդհատման վերաբերյալ դասընթացի անցկացումը: Կանայք հղիության արհեստական ընդհատման իրավական կարգավիճակի մասին ճիշտ, պարզ տեղեկատվության կարիք ունեն: Նրանց անհրաժեշտ է իմանալ, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել հղիության արհեստական ընդհատումը: Դեղամիջոցները դեղատներում փնտրելու փոխարեն (քանի որ հնարավոր է, որ այդտեղ կարող են թերի տեղեկատվություն ստանալ), կանանց անհրաժեշտ է խրախուսել տեղեկատվություն ստանալ վերապատրաստված բժիշկների³:

Բժիշկների համար անհրաժեշտ է անցկացնել հղիության դեղորայքային ընդհատման վերաբերյալ լայնատարած դասընթացներ՝ հատուկ շեշտադելով մերոդի ապահովությունը և արդյունավետությունը, ինչպես նաև հիմնավորված ռեժիմները: Այս գործողությունները կիրականացվեն մեր ծրագրի հաջորդ մասում, որի նպատակն է նաև ներկայացնել հղիության դեղորայքային ընդհատման բարձրորակ ծառայությունները Երևանի երեք հիվանդանոցներում և ընդլայնել անհրաժեշտ դեղամիջոցների հասանելիությունը:

³ Ներկայումս Երևանի 3 հիվանդանոցների եւ այլ հաստատությունների բուժաշխատողներն անցել են հղիության դեղորայքային ընդհատման վերաբերյալ դասընթաց՝ Մանկաբարձության, գինեկոլոգիայի և պերինատոլոգիայի ինստիտուտից, Ընտանիքի պլանավորման և սեռական առողջության կենտրոնից և Երևանի պետական բժշկական համալսարանից: